ԱՐՁԱՆԱԳՐՈՒԹՅՈՒՆ № 4
«ՀՀ ՊՆ-ԳՀԱՊՁԲ-24-26/1» ԾԱԾԿԱԳՐՈՎ ԳՆԱՆՇՄԱՆ ՀԱՐՑՄԱՆԳՆՄԱՆ ԸՆԹԱՑԱԿԱՐԳԻ ԳՆԱՀԱՏՈՂ ՀԱՆՁՆԱԺՈՂՈՎԻ ՆԻՍՏԻ

ք. Երևան 01.04.2024թ.
Ժամը 10^{30}

Ընդունել ի գիտություն, որ «ՀՀ ՊՆ-ԳՀԱՊՁԲ-24-26/1» ծածկագրով ընթացակարգի հայտերի բացումն իրականացվել է 25-ը մարտի 2024թ. ժամը 11^{00}-ին՝ Armeps (www.armeps.am) համակարգի միջոցով: Հանձնաժողովը մասնակցի կողմից ներկայացված հայտն ուսումնասիրելուց հետո շարունակեց աշխատանքը:

Մասնակցում էին՝
Հանձնաժողովի նախագահ, գնահատման աշխատակազմի պատասխանատու(ԳԱՊ)՝
ՀՀ ՊՆ ՆՏԱ ԳՎ ԹԱ վարչության պետ Հ. Մելիքյանը,
Գնահատողներ՝
ՀՀ ԶՈՒ ԳՇ ռազմանվագախմբային ծառայության պետ-գլխավոր զինվորական դիրիժոր, գնդապետ Հ. Գրիգորյանը,
ՀՀ ԶՈՒ ԳՇ ռազմանվագախմբային ծառայության պետի տեղակալ-զինվորական դիրիժոր, փոխգնդապետ Ա. Սիմոնյանը,
ՀՀ ՊՆ ՆՏԱ ԳՎ ԹԱՎ ապահովման 2-րդ բաժնի ավագ մասնագետ Ն. Գևորգյանը:
Գնումները համակարգող՝
ՀՀ ՊՆ գնումների կազմակերպման վարչության ԳԿ 3-րդ բաժնի գլխավոր մասնագետ Լ. Թազայանը:

«ՀՀ ՊՆ-ԳՀԱՊՁԲ-24-26/1» ծածկագրով գնանշման հարցման (ԳՀ) ընթացակարգի գնահատող հանձնաժողովի նիստի օրակարգը հաստատելու մասին.

(Լ. Թազայան)

1. Տեղեկություններ www.armeps.am կայքում էլեկտրոնային հայտ ներկայացրած մասնակիցների մասին.
2. «ՀՀ ՊՆ-ԳՀԱՊՁԲ-24-26/1» ծածկագրով ԳՀ ընթացակարգի էլեկտրոնային հայտերը կազմելու և ներկայացնելու՝ ընթացակարգի հրավերի պահանջներին համապատասխանության մասին, տվյալներ բացված յուրաքանչյուր հայտերում պահանջվող փաստաթղթերի առկայության մասին, տվյալներ յուրաքանչյուր մասնակցի ներկայացրած փաստաթղթերի՝ սահմանված պայմաններին համապատասխան կազմած լինելու մասին.
3. Յուրաքանչյուր մասնակցի առաջարկած գինը և տեղեկատվություն բանակցությունների վարման մասին.
4. Ներկայացված գնային առաջարկների հիման վրա «ՀՀ ՊՆ-ԳՀԱՊՁԲ-24-26/1» ծածկագրով ԳՀ ընթացակարգի ընտրված և այդպիսին չճանաչված մասնակիցների որոշման մասին.
5. Տեղեկություններ հայտերի վերաբերյալ հարցումների և պատասխանների մասին.
6. Տեղեկություններ հրավերով սահմանված գնման առարկայի բնութագրերի՝ օրենքով նախատեսված մրցակցության ապահովման և խտրականության բացառման պահանջների տեսակետից հիմնավորումներ ներկայացվելու վերաբերյալ:

Ընդունվել է որոշում՝ կողմ՝ 4 դեմ՝ 0:

1. Տեղեկություններ www.armeps.am կայքում էլեկտրոնային հայտ ներկայացրած մասնակիցների մասին.

(Լ. Թազայան)

1.1 ՀՀ ՊՆ կարիքների համար «Երաժշտական գործիքների» ձեռքբերման նպատակով կազմակերպված «ՀՀ ՊՆ-ԳՀԱՊՁԲ-24-26/1» ծածկագրով ընթացակարգին սահմանված ժամկետում էլեկտրոնային հայտ է ներկայացրել հետևյալ մասնակիցը.

Հ/հ	Մասնակցի անվանումը
1.	«ԷՍ ԷՍ ԷՅՋ ԷՅՋ» ՍՊԸ

Ընդունվել է որոշում՝ կողմ՝ 4, դեմ՝ 0:

2. «ՀՀ ՊՆ-ԳՀԱՊՁԲ-24-26/1» ծածկագրով ընթացակարգի էլեկտրոնային հայտերը կազմելու և ներկայացնելու՝ ընթացակարգի հրավերի պահանջներին համապատասխանության մասին, տվյալներ բացված յուրաքանչյուր հայտում պահանջվող փաստաթղթերի առկայության մասին, տվյալներ յուրաքանչյուր մասնակցի ներկայացրած փաստաթղթերի՝ ընթացակարգի հրավերով սահմանված պահանջներին համապատասխան կազմված լինելու մասին.

(Լ. Թազայան)

2.1 Մասնակցի էլեկտրոնային հայտը էլեկտրոնային գնումների Armeps (www.armeps.am) համակարգի կողմից համարվել է հետագա գնահատման համար ընդունելի:

2.2 Մասնակցի էլեկտրոնային հայտում հրավերով պահանջվող /նախատեսված/ փաստաթղթերն առկա են:

2.3 Մասնակցի հայտով ներկայացրած փաստաթղթերը համապատասխանում են «ՀՀ ՊՆ-ԳՀԱՊՁԲ-24-26/1» ծածկագրով ընթացակարգի հրավերով սահմանված պահանջներին, բացառությամբ հետևյալի՝

«ԷՍ ԷՍ ԷՅՋ ԷՅՋ» ՍՊԸ-ի կողմից ընթացակարգի 6-րդ չափաբաժնի մասով ներկայացված գնային առաջարկը չի համապատասխանում հրավերով սահմանված պահանջներին, մասնավորապես, սխալ է հաշվարկվել ավելացված արժեքի հարկի գումարը, որի արդյունքում ընդհանուր գինը ևս սխալ է ներկայացվել (գնային առաջարկի ավելացված արժեքի չափը չի համապատասխանում ՀՀ օրենսդրությամբ ավելացված արժեքի հարկի համար նախատեսված 20% դրույքաչափին), ուստի հիմք ընդունելով ՀՀ կառավարության 04.05.2017թ. N526-Ն որոշմամբ հաստատված «Գնումների գործընթացի կազմակերպման» կարգի 40-րդ կետի 4-րդ ենթակետի պահանջները՝ գնահատող հանձնաժողովը որոշեց «ԷՍ ԷՍ ԷՅՋ ԷՅՋ» ՍՊԸ-ի ներկայացրած հայտը 6-րդ չափաբաժնի մասով գնահատել անբավարար և մերժել:

«ԷՍ ԷՍ ԷՅՋ ԷՅՋ» ՍՊԸ-ի հայտով ներկայացված հետևյալ փաստաթղթի.

«ԷՍ ԷՍ ԷՅՋ ԷՅՋ» ՍՊԸ-ի կողմից հայտով ներկայացված՝ գնանշման հարցմանը մասնակցելու դիմում-հայտարարության (Հավելված N1), առաջին կետում նշված է մասնակցության իրավունքի պահանջներին բավարարման վերաբերյալ մասնակցի հավաստումը, այնինչ վերոնշյալ ընթացակարգի հրավերի Հավելված N 1-ի առաջին կետում նշվում է մասնակցի և իրեն փոխկապակցված անձանց մասնակցության իրավունքի պահանջներին բավարարման վերաբերյալ հավաստումը, ինչպես նաև՝ Հավելված N1-ի 2-րդ կետի 1-ին ենթակետում նշված չէ մասնակցի մասնակցության իրավունքի պահանջներին բավարարման անբարեխիղճ մրցակցության բացակայության վերաբերյալ հավաստումը, ուստի անհրաժեշտ է գնանշման հարցմանը մասնակցելու դիմում հայտարարությունը (Հավելված N1) ներկայացնել ընթացակարգի հրավերով սահմանված պահանջներին համապատասխան:

2.4 Ելնելով վերոգրյալից և հիմք ընդունելով ՀՀ կառավարության 04.05.2017թ. N 526-Ն որոշմամբ հաստատված «Գնումների գործընթացի կազմակերպման» կարգի 41-րդ կետը՝ 01.04.2024թ. կայացած նիստում գնահատող հանձնաժողովը որոշեց մեկ աշխատանքային օրով կասեցնել նիստը, իսկ գնահատող հանձնաժողովի քարտուղարը նույն օրն էլեկտրոնային գնումների Armeps (www.armeps.am) համակարգի միջոցով ծանուցեց վերոնշյալ մասնակցին՝ առաջարկելով մեկ աշխատանքային օրվա ընթացքում շտկել արձանագրված անհամապատասխանությունը:

2.5 03.04.2024թ.-ին կայացած նիստում գնահատող հանձնաժողովն արձանագրեց, որ սահմանված ժամկետում վերոնշյալ մասնակցի կողմից շտկվել է արձանագրված անհամապատասխանությունը և նիստը շարունակվեց:

Ընդունվել է որոշում՝ կողմ՝ 4, դեմ՝ 0:

3. Յուրաքանչյուր մասնակցի առաջարկած գինը և տեղեկատվություն բանակցությունների վարման մասին.

(Լ. Թազայան)

3.1 «Գնումների մասին» ՀՀ օրենսդրության և սույն ընթացակարգի հրավերի պահանջներին համապատասխան գնային առաջարկ է ներկայացրել հետևյալ մասնակիցը.

Հ/Հ	Գնան առարկայի անվանումը	Չ/մ	Քանակ	գնման գին ՀՀ դրամ	Ընթացակարգին մասնակցող ընկերությունների				
					Հ/հ	անվանումները	Գնային առաջարկ /ՀՀ դրամ/		
							Արժեք	ԱԱՀ	Ընդհանուր գին
1	Թմբուկների հավաքածու	հատ	2	1,800,000					Գնային առաջարկի բացակայություն
2	Կլարնետ	հատ	15	5,550,000	1	«ԷՍ ԷՍ ԷՅՋ ԷՅՋ» ՍՊԸ	4,600,000.00	920,000.00	5,520,000.00
3	Մեծ թմբուկ	հատ	2	1,258,000					Գնային առաջարկի բացակայություն

4	Բարիտոն	հատ	5	4,500,000					Գնային առաջարկի բացակայություն
5	Նոտաների ամրակալ	հատ	100	1,500,000					Գնային առաջարկի բացակայություն
6	Բաս տրոմբոն	հատ	1	1,500,000	1	«ԷՍ ԷՍ ԷՅՋ ԷՅՋ» ՍՊԸ	Հրավերի պահանջներին չհամապատասխանող առաջարկ		
7	Սոպրանո սաքսոֆոն	հատ	1	1,500,000	1	«ԷՍ ԷՍ ԷՅՋ ԷՅՋ» ՍՊԸ	999,166.67	199,833.33	1,199,000.00
8	Փոքր թմբուկ	հատ	6	1,800,000	1	«ԷՍ ԷՍ ԷՅՋ ԷՅՋ» ՍՊԸ	975,000.00	195,000.00	1,170,000.00
9	Տրոմբոն	հատ	2	2,650,000					Գնային առաջարկի բացակայություն

«ԷՍ ԷՍ ԷՅՋ ԷՅՋ» ՍՊԸ-ի կողմից ներկայացված գնային առաջարկը 6-րդ չափաբաժնի մասով չի ներառվել սույն աղյուսակում, քանի որ չի համապատասխանում հրավերի պահանջներին:

3.2 Մասնակցի գնային առաջարկի հաշվարկման ճշտությունը (հայտով ներկայացված գնային առաջարկի թվերով և տառերով արտահայտված տվյալների համապատասխանությունը), ինչպես նաև հաշվարկման թվաբանական ճշտությունը համապատասխանում են (ճիշտ են), բացառությամբ «ԷՍ ԷՍ ԷՅՋ ԷՅՋ» ՍՊԸ-ի գնային առաջարկը 6-րդ չափաբաժնի մասով: Տես՝ 2.3 կետ:

3.3 Ըստ ներկայացված տվյալների՝ մասնակիցն ԱԱՀ վճարող է:

3.4 Գների նվազեցման նպատակով բանակցություններ չեն վարվել:

Ընդունվել է որոշում՝ կողմ՝ 4, դեմ՝ 0:

4. Ներկայացված գնային առաջարկների հիման վրա՝ «ՀՀ ՊՆ-ԳՀԱՊՁԲ-24-26/1» ծածկագրով ընթացակարգի հրավերի պահանջներին բավարարար (համապատասխան) գնահատված հայտ ներկայացրած մասնակիցներից ընտրված և այդպիսին չճանաչված մասնակիցների որոշման մասին.

(Լ. Թազայան)

4.1 03.04.2024թ.-ին՝ հայտերի բացման և գնահատման նիստի ավարտի օրը, Armeps (www.armeps.am) համակարգում էլեկտրոնային գնահատման արդյունքում, գնահատող հանձնաժողովը որոշեց ներկայացված գնային առաջարկի հիման վրա «ՀՀ ՊՆ-ԳՀԱՊՁԲ-24-26/1» ծածկագրով ընթացակարգի հրավերի պահանջներին բավարար գնահատված «ԷՍ ԷՍ ԷՅՋ ԷՅՋ» ՍՊԸ -ին ճանաչել ընտրված մասնակից 2-րդ, 7-րդ և 8-րդ չափաբաժինների մասով:

4.2 Գնահատող հանձնաժողովը որոշեց՝ «ՀՀ ՊՆ-ԳՀԱՊՁԲ-24-26/1» ծածկագրով ընթացակարգը 1-ին, 3-րդ, 4-րդ, 5-րդ և 9-րդ չափաբաժինների մասով հայտարարել չկայացած՝ հիմք ընդունելով «Գնումների մասին» ՀՀ օրենքի 37-րդ հոդվածի 1-ին մասի 3-րդ կետի պահանջները՝ (ոչ մի հայտ չի ներկայացվել), իսկ 6-րդ չափաբաժնի մասով հայտարարել չկայացած՝ հիմք ընդունելով «Գնումների մասին» ՀՀ օրենքի 37-րդ հոդվածի 1-ին մասի 1-ին կետը (հայտերից ոչ մեկը չի համապատասխանում հրավերի պայմաններին):

4.3 Գնահատող հանձնաժողովը որոշեց հրապարակել «ՀՀ ՊՆ-ԳՀԱՊՁԲ-24-26/1» ծածկագրով ընթացակարգի հայտերի բացման և գնահատման նիստի արդյունքները:

4.4 Գնահատող հանձնաժողովը որոշեց հաստատել «ՀՀ ՊՆ-ԳՀԱՊՁԲ-24-26/1» ծածկագրով ընթացակարգի արդյունքում պայմանագիր կնքելու որոշման մասին հայտարարության տեքստը և հրապարակել այն:

4.5 Գնահատող հանձնաժողովը որոշեց «ՀՀ ՊՆ-ԳՀԱՊՁԲ-24-26/1» ծածկագրով ընթացակարգի ընտրված մասնակցին պայմանագիր կնքելու առաջարկ ներկայացնել՝ հիմք ընդունելով «Գնումների մասին» ՀՀ օրենքի 10-րդ և 36-րդ հոդվածների պահանջները:

Ընդունվել է որոշում՝ կողմ՝ 4, դեմ՝ 0:

5. Տեղեկություններ հայտերի վերաբերյալ հարցումների և պատասխանների մասին.

(Լ. Թազայան)

5.1 Մասնակիցների կողմից հայտերի վերաբերյալ հարցումներ չեն կատարվել:

Ընդունվել է որոշում՝ կողմ՝ 4, դեմ՝ 0:

6. Տեղեկություններ հրավերով սահմանված գնման առարկայի բնութագրերի՝ օրենքով նախատեսված մրցակցության ապահովման և խտրականության բացառման պահանջների տեսակետից հիմնավորումներ ներկայացվելու վերաբերյալ.

(Լ. Թազայան)

6.1 «ՀՀ ՊՆ-ԳՀԱՊՁԲ-24-26/1» ծածկագրով ընթացակարգի հրավերով սահմանված գնման առարկաների բնութագրերի՝ օրենքով նախատեսված մրցակցության ապահովման և խտրականության բացառման պահանջների տեսակետից հիմնավորումներ չեն ներկայացվել:

Ընդունվել է որոշում՝ կողմ՝ 4, դեմ՝ 0:

Գնահատող(ԳԱՊ)	Հ. Մելիքյան
Գնահատող	Հ. Գրիգորյան
Գնահատող	Ա. Սիմոնյան
Գնահատող	Ն. Գևորգյան
Գնումները համակարգող	Լ. Թազայան